

# ՀԱՅ ԵՆ

# Հայրենեաց

ՀԱՐԱՐԱԹԵՐԹ

## ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ



**TRAVEL**  
**BAIRENIATZ**  
AN ARMENIAN WEEKLY.  
27 Beach St., BOSTON

ՀԱՍՏԻ  
AMERICAN HAI PUBLISHING Co  
8 Bennet Street,  
BOSTON, MASS.

Entered at the Post Office  
at Boston, as Second-Class  
Mail Matter.

Subscription \$1.50 a Year.

ԲԱԺՆԵԳԻՆ  
Մ. ՆԱՀԱՆԳԱՅ ՀԱՄԱՐ  
Տարեկան \$1.50  
Վեցամսեայ 0.85  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ  
Տարեկան 10 Ֆրանք  
ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ  
Սմբարբույթեան զրկուած  
նամակ կամ ծրար ետ  
չեն վերադարձուիր:  
ԳԻՆ 3 ՍԷՆԹ:

Ուշադրութիւն մեր տեղափոխու-  
թեան և նոր հասցէին:  
Յողուած, թղթակցութիւն և դրամ  
ըրկի հետեւեալ հասցէով միայն:  
AMERICAN HAI PUB. CO.  
8 BENNET ST., BOSTON, MASS.

### ԺՈՒՎՈՒՐԻ ԶԱՐԹՆՈՒՄԸ

Ըսեք թէ ի՞նչ է ձեռնարկին խուլ և  
մեռելային միջոցառումը զարթո-  
նանային եղանակին. երբ որոտումներով  
ու փայլատակումներով նա հրատարու-  
թիւններ կը կատարէ. որոց տակ երկիրը  
ծաղկիլ, ծառերը կոնտիլ, գառնուկները  
մայրիլ, թռչունները զեղզեղել ու առու-  
ները կարկաչել կը սկսին. և ես ըսեմ թէ  
ինչ է ժողովուրդին զարթումը:

Դեռ երէկ էր որ Լոնտոնէն հեռա-  
գիր մը կը կարդայի, թէ հոն կատարու-  
ող ներկայ ընտրութեանց առթիւ արտո-  
ղոսանք, գեղանի ու գեռատի տիկին-  
ներ իրենց բարեկամներուն ու առուսին-  
երուն փարամաններն մէջ աթոռներ  
չակուտ տնջնք բռնկած, ինքզինքնին  
ժողովուրդին. ամբողջ, խուժանին մէջ  
կը նետեն. կը թափառին Լոնտոնի ամե-  
նէն աղտոտ փողոցները, մուտք կը փո-  
րկեն ամենէն աղքատիկ ու անմաքուր  
սուները. ցնցոտիներով պատած կոշտ  
մարդերու վրայ իրենց վարդազեղ ժը-  
վիտները կը տեղան. անոնց համարներ  
կը ձօնեն. քաղցրաւոր աղբաններով  
անոնց, այդ թշուառներու անարգու-  
ած ստորուկներուն, ոտից առնել կը խո-  
նարհին, կը մուրան պաղատազին—մու-  
րացիկներու զուէնները:

Դքսուհիներ են, Պարոնուհիներ են,  
Լորտուհիներ են ատոնք. որոնք դեռ և-  
րէկ, մտաւոր անցելոյն մէջ, իշխա-  
նութեան «աստուածային» բարձունքնե-  
րէն պատգամ, սպանալիք, ցատու, փա-  
տախտ ու պատուհաս միայն կը տեղա-  
յին ժողովուրդին, ռամիկին, ամբողջին  
վրայ:

Ուսկի՞ց, ինչէ՞ն այս անհամեմատ  
փոփոխութիւնները:

Ժողովուրդը զարթած է, անոր զի-  
տակցութիւնն է արթնցեր. նա իր իրա-  
ւունքները կը ճանչնայ, անոնց տէրն է:  
Երէկուան խուլ ու համր և մեռելայ ժո-  
ղովուրդը յարութիւն առեր է, կը խօսի,  
կորտայ, կը փայլատակէ, անոր արևը  
զերմացած է, անոր ընտրութիւնը կենսա-  
ւորուած է, ալևս նա Սինանէն խօսող  
հըօրն է, մաշող կրակը. անոր ձայնին  
առջև լեռները կը սարսին, կը հալին ու  
կը միան. ժողովուրդին բազուկը մեր-  
կացած է, անոր առջև կիլնան տիղմի մէջ  
կը թաղուին գազը, մականը, թաղը:  
«Ձայն բազմաց Ձայն Աստուծոյ», ահա  
ժողովուրդի զարթումին յարթանակը,  
որ ազամանդնուութեան թաղ կապած է երկ-  
նային համաստեղութիւններով:

ՁԱՅՆ-ՀԱՅՐԵՆԵԱՅԸ Հայ ժողովուր-  
դին զարթումը ձայնած է միշտ, ժո-  
ղովուրդի զարթումին մէջ միայն տե-  
սած ենք Հայութեան փրկութիւնը, հա-  
նութեան վերածնունդը, հայութեան  
բարթանակը:

Ամերիկայի Հայ գաղթականութեան  
մէջ Հայ ժողովուրդին զարթումին ցըն-  
ցումը տալու գեղեցիկ միտքը կայ Ուս-  
տըր դու մարտիի Համադժովին հրաւերին  
մէջ:

Դժբախդար, այո՛, այդ աւետարի  
ձայնը կուսակցութիւն մը ծագած է, ժա-  
մը հասած է սակայն՝ որ ժողովուրդը  
խօսի, ու անոր ձայնին մէջ մարին,  
ձուլուին կասակցական ձայները. կուսակ  
ցական եւր թաղելու և անոր շիրմին  
վրայ «Ձայն բազմաց Ձայն Աստուծոյ»-ին  
ազատութեան զանգակը հնչեցունելու  
օրն է:

Կուսակցական տեղային օրկան եղող  
մեր դրացին, Համաժողովի հրաւերին  
առջև գոցեց իր սակնները և նոյնը ընել  
առաջարկեց ժողովուրդին, առանց սա-  
կայն նպատակին դէմ բան մը ըսել կա-  
րենալու. կուսակցական եսին հիւանդու-  
թիւնն է: Ձայնը հակառակ կուսակցու-  
թեանն է. կուսակցութեանն է. կուսակցականներ  
տրամադիր չեն իրարու ձայնին ականջ  
տալու. ինչ իրաւամբ կրնան սպասել որ  
ժողովուրդը մտիկ ընէ իրենց, կուսակ-  
ցականներու, ձայներուն:

Պաղատազին կը հրաւիրենք Դաշնակ-  
ցական Հայրենակիցները, որ ժողովուր-  
դին բարի օրինակ տան: Կուսակցական-  
ները իրենց աղտոտ լաթերը ժողովուր-  
դին առջև թող չլուսանան: Ըսած ենք և  
կը կըրկենք. թող կուսակցականները  
իրենց կուսակցական խնդիրները իրենք  
իրենց մէջ լուծեն: Մեր առջև ունինք  
Ամերիկայի մէջ Հնչակեան Նահանգային  
վարչութեան ու Դաշնակցական կեդր-  
կոմիտէին իրարու դրած նամակները, ի-  
րենց մէջ յեղափոխական համաժողով  
մը կազմելու առաջարկին վրայ: Մենք  
սակայն սրտերը վրդովելու անպատեհու-  
թեանն խուսափելու նպատակաւ՝ անոնց  
մասին որևէ քննադատութիւն չպիտի  
ներկայացունենք: Մենք մէկ կողմը եր-  
բէք մեղաւոր չենք գտներ, որովհետև  
միևս կողմը անմեղ չէ: Կուսակցական  
եւր արձանացած կը գտնենք երկու կու-  
սակցութեանց մէջտեղը: Սյդ «Յար» թէ  
ոչ թաղելու, գոնէ բարեկարգելու միջոց  
մը կը նկատենք առաջադրուած համա-  
ժողովը:

Ըսած ենք, այդ ժողովը կուսակցա-  
կան չէ. յեղափոխական չէ, զուտ աղ-  
քային. ժողովուրդական տրամադրութիւն  
միայն ունի. հոն թող գայ ժողովուրդը  
հոն թող գան և կուսակցականները իրև  
ժողովուրդի հարազատ զաւակներ:  
Ժողովուրդին առաջնութիւն տանք,  
ժողովուրդին կարևորութիւնը ճանչնանք

Ժողովուրդի իրաւունքին ու դերին ա-  
ջև խոնարհինք: Ամուր քաշենք ազա-  
տութեան զանգակին լարը, թող զար-  
թի ժողովուրդը ժողովուրդի զարթու-  
մէն զիտի ծագի ազատութեան արևը.  
նոր կենսի գարունը:

Գ. Պ. Չ.

### ՈՍՂԱՂՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՆ

Հէնրի-Վան-Տայը, Նշանաւոր գըրա-  
դէտ երէցը, որ իր ամպիրնը ձգեց Փրի-  
նսթըն Գոլէճին մէջ դաստիարակի դերը  
ստանձնելու, հետեւեալ թանկագին կտո-  
րը գրէր է «Սաղարութեան ուղի»-ին վը-  
րայ:

«Ուրախանալ կենքին վրայ անոր  
համար որ մեզ կտաթէ սիրելի և զործել  
ու խաղալ և նայիլ վերը աստղերուն:

Գոհ եղիր բռնած դերքէդ, բայց մի  
ուներցմէ առջև բերեռ արդեանց լաւագոյ-  
նը. աշխարհի մէջ ոչ մի բան արհամար-  
հէ, բացի ստույթնէն, չկայ բան մը որ-  
մէ վախնալու ես, բացի վատութեանն.  
Կատարուէ յաւնտ այն բաներով որ  
քեզի հիացում կազգեն, քան անոնցով  
որ քեզի զգուանք կը պատճառեն, մի  
ցանկար դրացիդ ոչ մէկ բանին, ի բաց  
ստեալ անոր բարեբաղութիւնը և վար-  
մանց աղնուութիւնը. քիչ աղքատ մը-  
տած է թշնամիներուդ՝ իսկ յաճախ բա-  
րեկամներուդ և ամէն օր Յիսուսի վրա-  
յով»:

Ինչ գեղեցիկ, շինիչ ու կազուրիչ  
իտեպէ՛ք «Նայիլ աստղերուն»՝ ազգուրիչ  
ներշնչուիլ և առաջնորդուիլ ընտրութեան  
գեղեցկութեանն, ներդաշնակութեանն և  
վեհուրեմէն: Ամէն մարդ— կրօնական  
հաստատութեանը սահմանէն դուրս—,  
կրնայ լաւագոյն մարդկութեան բարձ-  
րանալ, երբ Յիսուսի նկարագիրը ուսում-  
նասիրելու պարտաքի: Բաշարտութիւնը՝  
որուն վրայ ամէն մարդ հիացումն մի-  
այն ունի, Յիսուսի անձին մէջ մարմ-  
նացած կը գտնենք. այն համեստ քաջա-  
սրտութիւնը՝ որ յոխորտալ չգիտեր եւ  
զոր մահը չկրնար շարժել. բարեբաղու-  
թիւնը որով միայն աշխարհս ընակելի  
կը դառնայ՝ Յիսուսով անձնաորուած է,  
ներողամտութիւնը դէպի տկարին թերու-  
թիւնները, նպատակին առջև անյող-  
թողի կամքը, և սէր՝ Յիսուսի մէջ գտած  
են իրենց ճշմարիտ մարմնացումը:

Մարդուն մէջ ի՞նչ կայ աւելի բարձր  
քան անվեհեցնութիւնը՝ որուն վեհու-  
թեան տակ վեհեցու նման վար կիշնեն  
ստույթնը, վատութիւնը և ստորնու-  
թիւնը. վերը գաղափարի մարդը կը գո-  
հուի, վարը ստորաքարը արարածները  
վեր քաշելու, ու աշխարհի թատերա-  
բեմին իրայ ո՞ր արարուածը այդ դերը ա-  
ւելի վսեմ պատկերացուցած քան է Յի-  
սուսի խաչելութիւնը:

Հասարակ Մահկանացու

### ՃԱՄԲՈՐԴԻ ՊՍՏՄԱԾԷՆ

(Իրական)

Սարսափի տարիներ էին, մեծ ջար-  
դին արիւնտ յիշատակը զարհուրելի ե-  
րազի մը պէս դեռ կը շարշարէր ամէն  
ուղեղ: Երկու ձիւներ ծածկած էին նա-  
հատակաց գերեզմանները, երկու անգամ  
ծաղկեր վարդերը; երկու անգամ պտուղ  
տուեր այգիները: Բայց որո՞ւ հող տարին,  
որո՞ւ հող եղանակը: Արևը կրակէ գունդ  
մը կերէէր, անձրևի տեղ արիւն կուգար  
երկնից կապոյտը հրեհի ու վառօդի  
ծուխի հակայ ամպ մը թուէր: Բաղա-  
քին մէջ մարդիկ դուլունին ուսերնուն  
մէջ քաշած՝ կծկտած յուշիկ կը քուէ-  
ին, վախկոտ նայուածք մը պտտցնելով  
իրենց շուրջը, կրնէրը պատուհանի վա-  
րագոյրի ճեղքերէն կը դիտէին փողոցնե-  
րը, իսկ պատիկները՝ միշտ երջանիկ պըզ-  
տիկները՝ տարիքէն շատ առաջ չափահաս  
դարձած ծերունի պղտիկները՝ անմեղ  
աչքերնին լայն բացած կը դիտէին մե-  
ծերու դողն ու սարսափը: Իմաստուն  
պատուները շատ դէ՛շ երազներ տեսնե-  
րէն, շուկային մէջ թուրքեր նոր սպառ-  
նալիքներ կարգացեր էին իր չափը մոռ-  
ցող Հայերու: Ամենէն ստորին համայնք,  
քելիսանձին մէկ մէկ Սուլթան դարձած՝  
իրենց սարսափելի ակնարկներով մարդը  
թաղերու կը տիրապետէին: Ամէն օր  
խուժու խուժու մարդիկ հրմշտուելով  
ծեծուելով բանտ կը լեցուէին: Նախա-  
տիք, Հայհոյանք, շարժարանք: Դրամ  
տուր որ ազատիս, տունդ ծախէ, արտը  
ծախէ, կնոջդ դարդերը ծախէ, պատի-  
ւը ծախէ որ ազատիս զնտանէն:

Ոստիկանապետ Հեմիլի դժոխքին դի-  
ւանապետն էր, խորամանկ, անուրթ և  
վրէժխնդիր, իր ճանկէն ոչ ոք կրնար  
պրծիլ, ճակատագրի պէս անխուսափե-  
լի, գերեզմանի պէս անյագ: Ծան բը-  
նազդով գիտեր թէ ո՞վ գրամ ունի, ո-  
րո՞ւն տունը գեղեցիկ աղջիկ ու հարս  
կայ, և աշխարհի վրայ ուժ մը չկար իր  
զագանի կիրքերը զսպելու, իսկ Աստու-  
ած, նա շատոնց արդէն զգուանքէն թէ  
ինչէն երես էր դարձուցեր՝ Հեմիլին յանձ-  
նելով իր ժողովուրդը, ինչպէս երբեմն  
սասանային յանձնեց իր որդին:

Իրիկուն մը ճոխ ընթրիքէ մը վերջ  
քաղաքին բռնակալը կերթար ինք իր կար  
գին հպատակելու կնոջ մը քմահաճոյ-  
քին: Մուրթ և դար ու փոս Փողոցի մը  
ծայրը կեցած էր հոմանիին տունը, ծա-  
ռան լապտերով կառաջնորդէր թիրոջը,  
դրան առջև սպասաւորին հրամաններ  
տալով ճամբու դրաւ: Դրան բաղիւտ-  
մին պատասխանեց Հիմիլի սիրուհին  
վաւառութեամբ, Մուհամմետի դրախ-  
տին արժանի ժպիտ մը երեւին՝ կնոջ ձեռ-  
քէն բռնած վեր ելաւ սանդուխէն, սե-  
նկին դուռը բացուեցաւ: սիրուհոյ ձկու-  
քը թող տուաւ քար դարձաւ ոստիկա-  
նապետը: Պատին տակ շուրջանակի նս-  
տած էին Սէրոբը և իր ընկերները. ճը-  
րագի լուսով կը փայլէին փամփոռչտնե-  
րը և հրացանները, ամպ մը անցաւ Հեմ-  
միլի աչքերուն առջևէն, աչքերը շիւնց,  
չէր հաւատար տեսածին, սակայն տասեր  
կու զոյգ կրակոտ աչքեր իրեն կը նա-  
յէին, տասերկու ձեռքեր դաշոյններու  
կոթեր կը սեղմէին:

— Էֆէնտիներ! շատ կը փափաքէի ձեզ  
հետ ծանօթանալ, պատեհութիւն կը

ինտուիտի, ուրախ եմ — և չողորդը թուր  
քը զեւ թնկելու համար բառեր չէր կր-  
նար գտնել, ահաանհր ռւժգին իրարու  
կը բաղկեցնէր, վերջին ըսածները տեսակ  
մը ողբի երևոյթ կանգնէին, վերջին ճիգ  
մ'ալ ըրաւ զէ ֆ է ն տ ի ներ՝ և ալ չկր-  
ցաւ յառաջանալ:

— Մը նեղուիք էֆէնտի՛ գոչնց երի-  
պասարդ մը ոտքի ցատկելով և բռնելով  
ոտիկանսպետի ձեռքէն որ . . . .  
Ջերմէ բռնուածի պէտ կը դողար: Սենե-  
կին մէջ նստած էր Սէրոբը, ոտքէն ցը-  
ղըլուի ուղղադէն, պեխերը ոլորած,  
սև աչքերը կրակ կը ցողացնէին, դէմքին  
վրայ կերակրէր զգուհանքն ու զայրոյթը,  
նողկալքն ու ատելութիւնը, բառ մը չէր  
գտնէր ըսելու, արհամարհոտ լուծութիւն  
մը կը պահէր, դատաւորը և դահիճը  
համը հին, ակնարկ մը փւխանակուեցաւ:  
Սէրոբին և երկատարդին մէջտեղ և ա-  
նա փայտակեց դաշտը. սուր ծայրը  
մտնեցաւ պաշտօնէին կոկորդը եւ միւս  
կողմէն դուրս ելաւ: Ամբողջ մարմնով  
զնուեցաւ թուրքը, ձեռքերը կծկուեց-  
ան, ծոկեցաւ մէջքը, ոտքերը երեքացին  
ուրիշ դաշտն մը իր դիակը գետին փը-  
ռեց:

Մութ ու դարու — փոս փողոցէն  
խուճի մը մարդիկ անձայն ու անշուշ  
ծրար մը կը տանեն քաշկուտելով, լուռ-  
թեան մէջէն աղբուրի կարկաշտը կը լը-  
տուի յաւիտենական երգի մը պէօ: Ջը-  
րին կը մտնենայ խուճի, հոն կամարին  
տակ կը նստեցնեն յօռտեալ դիակ մը,  
որ քանի մը ժամ առաջ ոտիկանսպետն  
էր. քանի մը վայրկեանէն նոյն լուռ-  
թիւնը կը տիրէ, աղբուրը կրկին կեր-  
գէ՛ այս անգամ ձեւովին տխուր բաղդը:

Առաւօտուն կանուխ արևը կը ծա-  
գէր Մոխրոյ յեռնեղէն, հսկայ լեռան մը  
կողմին վրայ ծառներուն շուքին տակ  
կը հանգչէին Սերոբի ընկերները, իսկ  
խմբակներ իր անհանգիստ աչքերը դար-  
ձուցած էր հեռուն մշուշոտ կետի մը  
վրայ, տխուր նախազգացում մը կը ճի-  
ւէր իր անվախ սիրտը: Իսկ հեռուն մը-  
շուշին տակ՝ քաղաքը սարսափը կը թա-  
գաւորէր. դռները ամուր կը պուտած,  
մաքրիկ գետնայարկերը կծկուած, իրա-  
րու կը փախային. մէկը չէր համարձա-  
կէր պատահանէն դուրս նայելու, իսկ  
փողոցը զոյգ զոյգ կանցնէին դիւնորնե-  
րը հրացանները ուսերուն, մուլաները  
չէյնքն ու պաշտօնագրերը գայլի վոհ-  
մակներու պէս կատաղի՝ անհանգիստ ու  
տենդոտ քայլերով անկիւնէ անկիւն կեր-  
թային և ալէկոծ ծոցու մանչիւնին պէս.  
պարբերաբար կը բարձրանար սուսակի ըս-  
պանակները զիցէք դուք քեանֆրոններ,  
կեցէք դուք . . . .

Ա. ՏԻՐԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԳՆԱՂՈՒԹԸ  
ԵՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Ժամանակը ինչպէս անհատներու՝  
նոյնպէս ժողովուրդին համար նորանոր  
պահանջներ կը ծնանի, և այն պահանջ-  
ներուն գոհացում տալու է:

Անցել ութը տարւոտ սարուան մէջ՝  
Ամերիկայի զանազան քաղաքներու հա-  
յերը գոհ կըլլային միայն իրենց տեղա-  
յին համագումարումներովը, հոն իրենց  
անձուկ անկիւնին մէջ զանազան ազգա-  
յին խնդիրներու վրայով լսելով վիճա-  
բանելով, և իրենց անկիւնին անձուկ-  
թեանը նման իրենց կատարած գործերն  
ու փոքր ու անձուկ էին. բայց ժամա-  
նակին ու հանգամանքներուն ընդամը  
չատ մը զգայուն ու բանիմաց հայ ան-  
հատներու մէջ զօրաւոր ու անհանգիստ  
ընող պահանջ մը դարձած է նեղ ու սահ-  
մանափակ շրջանակէն դուրս ելլելը եւ  
Համաժողով մը կազմելը ուր Ամերիկայի  
ամբողջ հայ զաւորութիւնը ներկայացուած  
ըլլայ իր պատգամաւորներովը:

Առ նուազն տասն և հինգ հազար ան-  
ձերէ բազմացեալ զաղուժ մը ունինք  
այնպիսի երկրի մը մէջ ուր ամէն դիւ-  
րութիւններ և թողտուութիւններ տրու-  
ած են ազատութիւն միատեղ գալու և  
կարծիքներ փոխանակելու և զարգաց-  
ման ու յառաջդիմութեան համար  
հարկ եղած ամենատարրական միջոցնե-  
րուն գործադրութեանը վրայ որոշում-  
ներ քուէարկելու: Ինչո՞ւ այս հսկայաքայլ

յառաջ քաղու ամերիկացի ժողովուր-  
դին հետք անակելով՝ տակաւին արեւել-  
ցիներու յատուկ դանդաղութեամբ կը  
դեգերինք մեր անձուկ շրջանակներուն  
մէջ. կարծես թէ Արեւելքը հոս փոխա-  
դրած ու անոր մէջը բնակած ըլլայինք  
ուր ճամբորդութեան համար արեւանակի  
ու ջորիի պէտք ըլլար և մեր նուիրակ-  
ները Հայաստանի մէջ զլիսաւոր քաղաքը  
ըրկելու համար 15-20 օրուան մը կար-  
տէինք, և որ պէտք էր 40-50 հոգիէ բաղ-  
կացեալ կարաւանի մը ընկերանար՝ որ  
պաշտպանուէր քանի մը դիւնեալ ջորե-  
պաններով և ամէն մէկ իջևանին մէջ՝ ու-  
տիկանական խուզարկութեան ենթարկու-  
էր: Ձե՛նք լսե՛ր սուրացող լողկառքե-  
րուն սուրուները ամէն րոպէ ամէն կողմ:

Օ՛րն, յառաջ, մենք շատ ետ և ուշ  
մնացած ենք: Անցեալին մէջ շատ ողբա-  
լու և քննադատուելու անհոգութիւն-  
ներ և տգիտութիւններ ունեցած ենք,  
բայց անցեալին վրայ ողբալը և անցեալը  
քննադատելը միայն բաւական չէ, ներ-  
կային ընձեռած պատեհութիւններէն ան-  
միջապէս օգտուելը անցեալին վնասնե-  
րը դարձնել կը նշանակէ: և ասոր մէջ  
կրկնակի իմաստութիւն կայ: Այսօրուան  
ներկայն՝ ժամանակէ մը ետք անցեալ  
պիտի ըլլայ, և մենք եթէ կրկին և կրկին  
կը փայտեցնենք պատեհութիւնները՝ մեր  
վիճակին դարձանումը աշագիւն կերպով  
կը գծուարանայ, եթէ անկարելի չդառ-  
նար:

Ուստի գումարները համաժողո-  
վի մը հրաւէրը ուսկից ծագում կանէ  
թող առնէ, այդ Ամերիկայի հայ դադ-  
թականութեան իրաւացի պահանջն է:  
Անոր ձայնը որ քան զօր կը զօրանայ, և  
դիւթական ու իմացական ոյժերու ան-  
դիմադրելի բորբոքը կը զգայ իր մէջը,  
և այս ամէնը տառապեալ հայրենիքին  
մեծ ցաւերուն իր օպիդանի գործա-  
ծուելու համար իմաստուն, հաւատարիմ  
և կորովալիր ձեռքերու մէջ դրուելու  
են, և այդ ձեռքերը կտեղծուին միայն  
ամբողջ զաղթականութիւնը ներկայա-  
ցընող ժողովի մը մէջ: Ու այդ պիտի  
ըլլայ ամերիկայի հայութեան անդրանիկ  
Համաժողովը՝ հիմնաքար մը որոյ վրայ  
Աստուծոյ օգնութեամբ և ազգին ամե-  
նաբնտիւր և ամենակարող զաւակացը աշ-  
խատակութեամբ պիտի ամրապինդ  
կառուցուին Գործունէութեան, Միաբա-  
նութեան և Յառաջդիմութեան փառա-  
ւոր շէնքերը:

Թող ցուցուեն, եթէ կան (կարծեմ  
որ երբէք չգտնուին) այնպիսիներ որ Հա-  
մաժողովի մը գումարումը անպէտ կը  
համարեն. թէ այդ տեսակ ժողով մը չը  
գումարուելով, զիրար չհասկնալով եւ  
գործունէութեան նոր և իմաստուն ե-  
ղանակներ գտնելով կրնանք աւելի յա-  
ռաձգել մեզ և հայրենիքին աւելի աղէկ  
ծառայել, այն տեսն մենք ալ կը հա-  
մողովինք ու մէկդի կը կենանք համաժո-  
ղովի մը պահանջէն: Բայց մենք անցեալ  
մը ունինք Ամերիկայի մէջ՝ որ հսկայ  
ապացոյց մ'է թէ ոյժերու անշատ, ան-  
շատ գործունէութեամբ կարելի և նպա-  
տակայարմար օգուտ մը Հայացուցած  
չենք հայրենիքին: Ի՞նչն՝ որքանոց կը պա-  
հանք հայրենիքին մէջ (ամէն մէկ քաղա-  
քի հայեր կարելի է երկու երեք օրերը կը  
պահան զանազան որբանոցներու մէջ) կը-  
թական ինչ ծրագրեր և ինչ հաստատու-  
թիւն ունինք Ամերիկայի մէջ հայ ման-  
կանց միջակ դաստիարակութիւն մը տա-  
լու՝ հայ լեզուն և հայ ազգութիւնը ա-  
նոնց ծանօթացընելով, և մեր դատին յա-  
ջողութեան համար դրամական ինչ ոյժ  
գոյացուցած ենք:

Ոչ ոք դրական պատասխան մը կըր-  
նայ տալ այս հարցումներուն, և եթէ այս  
ընթացքով զաղթականութիւնը յիսուն  
տարի ալ այս երկրին մէջ մնայ՝ նշանակե-  
լի օգտակարութիւն մը պիտի չունենայ  
ոչ իրեն և ոչ ալ հայրենիքին:

Կոչում կընեմ այն ամէն ազգայնոց՝  
որ համաժողովի մը անհրաժեշտութիւնը  
կըմբռնեն և անոր օգտակարութեանը հա-  
մողուած են, հաճին իրենց կարծիքները  
յայտնել և աշխատակցել իրենց գտնուած  
վայրերուն մէջ այդ Ազգային օգտակար  
գումարումին իրականացմանը:  
Սխալներ եթէ կը անդրանիկ համա-

ժողովէն բան ակնկալենք: Ամէն բանի  
սկզբնաւորութիւնը պարտի կըլլայ և  
թերևս անշուն. բայց գործի մը սկզբ  
նաւորութիւնը գործին կէսը ըսել է. ի-  
մաստակց խօսքին համեմատ՝ մենք հա-  
մաժողովի մը բացումովը գործին լաւա-  
գոյն մասերէն մին կատարուած պիտի  
տեսնենք և այդ ժողովը ապագայ աւե-  
լի արդիւնաւոր ու զարգացուն համա-  
ժողովներու նախաքայլը պիտի ըլլայ: Կը  
յուսանք ու կ'աղթենք սրտագին:  
Մ. Մ. Յ

Լօրէնս

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ  
ՆՕԹԵՐ  
(Հարուսակութիւն նախորդ թուէն)

Կովին կարեւոր գործարաններն են  
մարտողական և կաթի գործարաններ  
ու սիրտ և թօք: Անկարեւոր ըսուած-  
ներն են, ոտքեր, վիղ, և մարմնոյ ու-  
րիշ զանազան մասեր: Կով մը այն ա-  
տեն աղէկ կը սեպուի երբ իր կարեւոր  
գործարանները զարգացած ու զօրացած  
են, և անկարեւոր գործարանները տկա-  
րացած ու ետ մնացած:

Կարեւոր գործարաններէն ամենէն  
առաջինը կամ հարկաւոր ստամոքսը և  
մարտողական գործարանները կը նըկա-  
տուին: Լաւ կովը պէտք է ունենայ շատ  
զօրաւոր մարտողական գործարաններ,  
որոց մէջ մեծ քանակութեամբ կեր կը-  
րայ լեցնել և մարսել, պէտք եղածին պէս  
մեծ և ցցուած փորը ուրեմն հարկաւոր  
և աղէկ նշան մը է:

Կաթի գործարաններ: Ծիծը ըլլալու  
է մեծ, աղուոր մը տարածուելու է զէ-  
պի առաջ և ետ, ետեւի կողմէն լաւ մը  
երևնալու է, բնաւ մտտ ըլլալու չէ,  
և պտուկներն ալ պէտք է քառակուսա-  
ձեւ գետեղուած ըլլան, այսինքն մէկ  
մէկէ՛ հաւաքաբարսու հեռի կաթի երակ-  
ները խոշոր ու ցցուած ըլլալու են, այն  
պէս որ ձեռք տարուած ատեն անմիջա-  
պէս զգալի ըլլան:

Զգային դրութիւն: Ունենալու է  
խոշոր ու պայծառ աչքեր, որովհետև պայ-  
ծառ աչքերը լաւ զգային դրութեան մը  
նշանն է:

Մարմնութեան գործարաններ: Մայ-  
րութեան գործարանները զարգացած ըլ-  
լալու են. մեծ ու ընդարձակ որովայն մը  
էն կարեւոր մասը կը կազմէ, որոյ մէջ  
անած հորթը առողջ, զօրակազմ և մեծ  
կըլլայ:

Սիրտ և թօք: Ունենալու է առողջ  
սիրտ և զօրաւոր թօքեր, որովհետև ա-  
տենց օգնութեամբ միայն կարող է մար-  
սել մեծ քանակութեամբ կերակուր:

Գալով անկարեւոր գործարաններու  
մասին.

Կովին ոտքերը գրեթէ բնաւ յարա-  
բերութիւն չունին կաթի արտադրու-  
թեան հետ. ուրեմն լաւ կովին ոտքերը  
ըլլալու են կարճ և բարակ, կրելու է այն-  
չափ քիչ միս որչափ կարելի է:

Կովին վիղը մասնաւոր յարաբերու-  
թիւն մը չունի կաթի արտադրութեան  
հետ, ըլլալու է բարակ և նիհար որչափ  
որ կարելի է:

Ականջները, եղջիւրները, ոսկոյնները  
յարաբերութիւն չունին կաթի արտադր-  
ութեան հետ, ըլլալու են այնչափ նիհար  
բարակ, ու պարտի որչափ որ կարելի է:  
Մէջքը ցած, մէջքի երկու ծայրե-  
րու ոսկոյնները և կողի ոսկոյնները աղէկ  
մը սնկուած ըլլալու են՝ որոնք քիչ միս  
կրելու նշաններ են: Դիտուած է նաև որ  
երկայն ազին լաւ նշան մ'է:

Ուրեմն, գէր և զօրակազմ երեցող  
կովերը թող գմէք շխաբեն իրենց սիրուն  
և կայտառ երևոյթովը. աւելորդ միս  
կրելու և զայն սնուցանելու հարկ չկայ,  
նիհար կովերն ալ կրնան առողջ ըլլալ. և  
ուստի, ընտրեցէք այն կովը որ շատ միս  
չի կրեր, կուտէ շատ կեր և կը գործա-  
ծէ գայն կաթի արտադրութեան համար  
և ոչ թէ միս աւելցնելու:

Կովին տարիքը նաև կաթի քանա-  
կութեան հետ մեծ յարաբերութիւն ու-  
նի: Կովերը շատ կաթ կուտան իրենց  
3 և 5 միջև 10 տարեկան եղած ատեն:  
3 ասէն վերջը կաթին քանակութիւնը հե-  
տադէտէ կը նուազի և շահաբեր չըլլար  
զայն պահէ: Կովի մը ամենէն շատ

կաթ տուած շրջանը սակայն, վեց կամ  
եօթը տարեկան եղած ժամանակն է:  
Եղիա Թ. Գղիբեան

Շարունակելի  
ԱՆՔԱՂԴ ՄԱՐՕԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ  
(Հազարից մինը)

— 0 —

«Տարի մը առաջ էր որ մեր սէրը  
սկսեք էր. և տարի մը ամբողջ երջանիկ  
երազներով յաիրացած և անորոշ ապա-  
գայի երկիւղով էլ տանջուած: Մուրաւ  
հովի էր և միայնակ ն 1000ից աւել ոչ-  
խարներ զլուս սնցած նարառուցի ա-  
մայի լեռներու անվախ եւ աներկիւղ  
արածում էր. մեր քուրդ աղաներն էլ  
իրանց կիթաններ ուրիշ չէին վտառու:  
Ահա այն մշակներին հաց, ապուր տա-  
նելիս երբեմն միայնակ Մուրաւին հան-  
դիպելով համարձակեցանք կամաց կա-  
մաց սիրտն իրարու բանալ. մարմնաւալ  
և վերջապէս սիրել, լեռների մաքուր  
կեանքի անարատ և անրիժ սիրով: Այդ  
օրերից, վկայ կանչելով Մ. Գղիբեանը,  
մենք ուրեցնեցինք իրար մեր ձեռքը ու  
սրտեր. ի հարկին եթէ խոշորասներ իսկ  
ծագէին, միասին թողլու և փայտելու  
հաստատ որոշումով: Այ կարծես իրարի  
համար ծնած լինէինք. և ինչ կասկած,  
որ այս բան շատ ատեն գաղտնի չի մնաց  
մեր ծնողներէր: Մայրս նախ առաւ մը  
յանդիմանութիւններէր յետ կը տեսնէի  
որ կը կակղանար. — է՛նչ ինչ արած. կերևի  
նրան ճակտի գիրն էլ էսպէսի. — կըրկ-  
նում էր նա ամէն ատիւր հօրս և մեծ  
կերպարներս:

Այ թէ և առաջուայ նման յաճախ և  
համարձակ չէինք տեսնուում, բայց էլի  
գաղտնի երբեմն իրար կը գտնէինք. ա՛լ  
որքան անուշ էին այդ դապտունի և վա-  
ղանցիկ քանի մը րոպդներ, որ պէ՛մու-  
րատ կեանքիս միակ վայելքներն եղան:  
«Այլու կալ կիթոցի յետ պիտի կա-  
տարուէր մեր հարսնիք. ալ օրեր ան-  
համբերութեամբ կանցունէինք, այդ եր-  
ջանիկ ատենուան հասնելու համար. ինչ  
որ ի՞մ սև բազդիս համար չիկար գրու-  
ած:

\* \* \*

«Այդ տարի նարտուզի մէջ գարուն  
սովորականից քանի մը օրեր առաջ բա-  
ցուեցաւ: Չօժա գնալու ատենները կը  
մօտիկային նարտուզի ամէն հայ դիւղ  
կարող չէր ի հարկէ զօժա գնալ և արե-  
րի ամայութիւններին մէջ անգէն, ան-  
պաշտպան իր մայ և ոչխարներով գե-  
շեր ցերեկ այդ տեղեր մնալ, բայց մեծ  
և մեր նման ուրիշ հայ դիւղերն էլ որ  
բուրդ աղաներ ունէին իրանց մէջ. ան-  
խըտիր միասին կը գնայինք զօժա՝ նը-  
րանք մեզ որպէս իրանց բայա — իսլամ-  
ների, պաշտպանիկ պարտք էին համա-  
րում. և ատես ինչո՞ւ էլ չի պաշտպանե-  
ին. չէ՛ որ նրանց պարուտ և հարստու-  
թիւն մեր վրայ էր:

Նարտուզի մէջ գարուն հիանալի է  
այնու ամանաւանդ որ տարուայ մնացած  
8 ամիսը ձմեռ ու բուրք է անուում: Մեր  
երկրի բարձր է, նա շատ բարձր է քան  
հոս — վանք, դեռ առնու չի սկսած ան-  
վերջ ձիւների տարաի ծածկում մեր  
սարն ու ձոր ու ամբողջ գիւղեր. տարի  
կը լինի որ ամիսներով մեր հարեան  
գիւղերն ազամ այցելել կարելի չէ: Թէն  
այդ քանակ և սառնամանիքը մեզ հայ  
չինականներին գէթ աւազակ չէր թօջո-  
ներից և գարունի հետ վերադարձող ֆո-  
շար քրդերի աւարառութիւններից պաշ-  
պանում էին. էլի սակայն այդ երկար և  
ձանձրացուցիչ դադարն ու ձմեռից յետ  
գարնան նշաններ սրտագին ուրախու-  
թիւններով ողջունում էին: Յունիսի ըս-  
կիզներին արդէն մեր սարն ու ձոր ձիւ-  
նահալ կսկսէին կանաչիլ և ծաղկիլ, ան-  
համար ընդ խաղիկներով:

«Ահա և այդ օրերուն և մենք ցօ-  
մա էինք ելնում: Մեր տեղը սովորա-  
բար Տըւշին էր, Գիրպատայանի հարաւ-  
բանելը կանաչ բարձրութիւնների մէջ  
ընդարձակ անվերջ մարգագետիններով  
և տյգ ծաղիկն ու խոտերի արանքների  
նազով գեղեցիկ անմահական պաշ-  
աղբիւրներով լի: Իւրաքանչիւր տու՛

իրա սեղերը գիտեր և ահա մի օրում սև վրաններ ընդարձակ տարածութեան մը վրայ քով քով կը բարձրանային, ինչ որ պիտի կազմէին քանի մի ամիսներէ չար մար մեր առժամայ ընակալայրեր:

Մեր աղաներ ինչպէս գիտէի կրավ-ցիներին էին, որ և նրանց ամենից աւելի նշանաւոր տներէց կը բաղկանային ճտուներ: Ահա դրանք էին որ մեզ պաշտպանում էին և մեր հոտեր քօջարների և շէրթօջրների դէմ: Բոլորէն իրանք առնելով և շան պէս մեզ ծառայեցնելով իրենց ալ առ քրդերի հետ ընակաւարար հաշտ շինեցին, տարի և ամիս չէր ըլլար որ մեծամեծ կռիւներ չի պատահէին մերոնց և դրանց մէջ: Ամէն գիշեր հոտերի և զուարեաների վրայ յարձակումներ էին լինում, հարկ էր լինում գիշերն իրան գէնք ձեռքին հսկել և անալ կռուիլ և հարածներ:

Այն քանի քանի անգամ իմ Մուրաւան էլ թամէի: Յարհուտի և Եաթրիի հետ նըրանց հրացաններից մինը ձեռքին Բօշարների և ուրիշ բարեւաւորների հետ ինչպէս ինչպէս էր: Այդ բոլորէն իմ գոման բոլոր վրէժակներ բռնում էին. եւ ես ինքս ասես որքան սրտաւրբ սպասում էի նշանածիս կռուի այդ ահեղ բռնակներում և ապա որքան ուրախանում սրտովս երբ նրա յաղթական և հպարտ վերադարձ տեսնում էի:

Մա մեր սովորական վիճակն էր միշտ և դեռ աղէկ. ինչե՞ր, ասես, ապա չէին քաշում այդ շուն ուսաղակներից մեր միւս անտէր հայ գիւղերը:

Այդ տարի ալ ինչ երկարացան Տոբինի մեր կեանք շատ լաւ անցաւ, Հայոց ազատութեան լուրեր որ օրի իրարի ետևից կը գալին, աղաներ արտում էին և մենք ասես ուրախ. և Եաթրի անգամ որ վերջին բանտարկութիւնից ազատեցին այնքան գոռոց՝ կատուի պէս կակզացիլ էր բոլորիս հետ:

Ուրախ էի մասնաւոր: Ես: Ես երկու մուրաւ ունիի կատարելու, ալ իմ այդ ուրախութիւններին և խնդուքներին չափ և վերջ չիկար: ամէն օր իւր և պանիս պատրաստած և ծծում գարկած ատեններ երգերիս ձայն մինչի հարևան վրաններ կը հասնէին:

Այդ շին, շատ կը կոկոս: շատ կը խնդաւ Աստուած ինքն պահի չար աչքից, մի վատ բու պիտի բերես գլխիդ, կը կրկնէր օրէն հազար ագամ գլխին խեղճ մայրս: Բայց իմ ինչ հոգս միթէ սրտիս այդ անմեղուկ ուրախութիւնն անգամ այդքան չարագուշակ լինելը գիտէի՞ ես:

Այնուհետ և մենք էլ վերադարձած մօզակց հաստատուել էինք գիւղում:

Մեծ եղբայրս Բարխուդարեանց Պապու—Մուրաւի հօր հետ, որ մը ճամբայ ելան երեկնադիրին Մեր վանայ գնալու որ միւս օր հոս—քաղաքը դան հարսնիք պատրաստելու համար: Ալ սիրտս շատ անհամբեր էր. այդ մի քանի օրին անգամ անցունել զժուար կը թուէր ինձ:

Սակայն քանի օր էր մի ինչ որ իրարանցում կար քրդակած շրջանակներում. աղաներից մի քանիները Մեր վանայ միտարին մօտ կանչուեցան. յուզում ընդհանուր էր եւ ամէնքը կարծում էին, թէ անչուտ մի բան եղել է հայերի համար և դեռ համար էլ են այս իրարանցումները: Եւ իրաւի շատ չի անցած լուրեր հասան քաղաքից որ Հայոց խնդիրը Սուլթան ընդունել է:

Հայերիս ուրախութիւն այդ առթիւ աննկարագրելի է: Բայց ասիտո՞ւ, ինչքան կարճ տեւեց. թերևս մի քանի օր. մին էլ սև ձիւն բրթաւ գլխուստու... կողովուտ, հրդեհ, սպանութիւն և անուանազութիւն մի օրից հեղեղի պէս մեզ պատեց: Ինչ եղանք, ինչ կը լինէինք չը գիտեմ, չեմ յիշում, ալ ողբի, օգնութեան աղաղակներ յուսահատական ձեռներ էին որ ամենուտս լսվում էին. երեկուտան մեզ պահպանող աղաներն էին որ այսօր իրենց բազմաթիւ հարևանների հետ միասին խառնիխառն սկսել էին այս գործը: Հայերի մօտ ոչ զէնք կար եւ ոչ էլ պաշտպանութեան ուրիշ միջոց, հետևաբար ալ ոչ ճար կար ոչ ալ ազատում: Ինչ էր լինելու մեր վիճակը, Աս-

տուած գիտէ, փակուած տան մէջ կիսակապ կը դողդոջայինք, մին էլ երբ մեր տունը պաշարուած, լսեցի քրդերի խապոտ ձայներ որ մօտից աղաղակում եւ հայհոյում էին և որոց միջոց որոշ լուսմ էի իմ անուշիս հնչուել, որ բերնէ բերան կանցնէր: Ալ հասկցայ սև ճակատագիրս, արտասուք աչքերիս մօրս փաթաթուեցայ—Այն մարդ ինձ մի թող տոր—Սիւն լինը յուսահատ. ձեռներ երկինք բարձրացրած անձկազին «Հայեր կը մորթեն ո՞վ Աստուած, անարատ Ս. Գեղարդ, դու օգնութեան հասնիս»: Կը մրմնջաի:

Մ. Ս.

(Շարունակելի)

Հ. Ա. Յ. Ա. Կ. Ա. Ե. Մ. Ե. Ծ. Ժ. Ո. Ո. Վ.

Յառաջիկայ շարժի երեկոյ Հոկ. 20 ին ժամը 8 ին Գանուէլ Զօլին մէջ Հայկական Մեծ Ժողով տեղի պիտի ունենայ ըլլալիք Նախագահական ընտրութեան հանդէպ Հայոց Բարեբաղակական պատմականութիւնները մասնաւոր ընելու և Հայոց Բարեբաղակական պատմականութիւնը ինչպէս պիտի նշանակուի և ինչպէս պիտի կարգադրուած է Ռիբլովի Եաններու կողմէն:

Րիբլովի Եան Սթիվ Բամիթիին կողմէն պիտի խօսին Albert H. Washburn և Boston եւ Frank E. Fitts of Somerville. Հայերու կողմէն պիտի խօսին Արթ. Պատ. Հրպարթ Ալլէն. և Տիար Գարակիւլեան: Փլաթֆորմին վրայ պիտի նստին շատ մը հանրածանօթ Հայերակիցներ. ինչպէս և Ամերիկացի նշանաւոր բարեկամներ:

Իրաւունք ունինք յուսալու թէ մեր սիրելի հայրենակիցները այսպիսի ժողովներու նշանակութիւնը ըմբռնելով՝ պիտի քայքայեն դժեղ իրենց ներկայութեամբ: Ամէն հայ անխորհրդ և անխելացի ի դիմաց կարգադիր Յաննան Ատենապտ Գ. Էքսէրճեան Ատենապտ Կ. Գարակիւլեան

M. HARPOOTLIAN,

P. O. Box 470, Worcester, Mass

ՍԵՂԱՆԱՌՐ ՓՈՆ. ԳՐՈՑ

Տանկաստանի բոլոր քաղաքներն զբնում կը փոխադրենք: Մեր տան կեդրոնատեղիք են Կ. Պոլիս ու Նարբեղ մեծ. Յարութիւն է՞. Նարբեղեան և կողարք մեծ գումարով փոխ գլխ անողներուն մասնաւոր գեղել կընենք: Ամէն գծի վերայ նուային տոմսակ կուտանք. տոմսակ ու դրամ հեռագրով կը զրկենք Մարտի 1: Մեր խանութին հասցէն է 57 Hanover Street. Միհրան Նարբեղեան Ուստր

ԱՉԳԱՅԻՆ ԳՐՈՒՆԻԿ

Կ. ՊՈԼԻՍ 5 Օգոստ. 1900

Պատուարժան անգամը Որբանում Ընկերութեան

Իսթ վուօթթ. Թաունի յ'Ամերիկա

Ստացանք Յուլիս 12 թուականու ձեր ուղղած նամակն, և քանձեցինք 10 Օսմ. սուլույ և տար զըլ զուժարն, զոր դուք ինքնաբերաբար հաւաքելով քաղաքի մէջ՝ զրկած էիք ի նպատտ որոց:

Մեծ եղաւ մեր հաճոյքն՝ տեսնելով այն սրտազին յօտարութիւնն, որով կը մատուցանէիք մեզ ձեր անկողութիւնն որոց խնամածութեան գործին մէջ: Ուստի կը նուիրեմք մեր օրհնութիւններ անգամ, և անգի օժանդակող բարեհաղաքացի, և կը մաղթենք ամենուր նորանոր յաջողութիւններ, որպէսզի ուրիշ անգամ ևս միթիարութեան առիթ ընծայէք չէ՞ք որոց, որք կը կարծուին միշտ ձեր գթութեան պաշտպանութեան:

Մնամք Ազգայնաբար Պատրիարք Կ. Պոլսոյ Մաղաքեա Արքեպիսկոպոս

Հոկտ. 15 ին 42 Հայեր աքորուած են Կ. Պոլսէն:

ՄԵՐԱՅԻՒՄ

ԲԱՐԻՉԻ ՀԱՅՈՑ ՄԱՏՈՒՈՂ

Գանի մը տարիներէ ի վեր, մեր թերթերը շատ անգամ գրեցին Բարիզի մէջ Հայկական Մատուռի մը շինութեան վերայ. մի քանի անգամ լուրեր տարածուեցան թէ արդէն պէտք եղած գումարը հաւարուած է շինութեան համար և թէ տեղ ալ որոշուած է: Ոմանք նոյն իսկ տարօրինակ լուր մը տարածեցին մի քանի ամիս առաջ թէ Յրանսական կառավարութիւնը շինութեան տեղին չը նորհած է Բարիզի Հայ գաղթականութեան, բայց բոլոր այդ լուրերը անհիմն էին և տարածուելն քանի մը օր յետոյ հերքուեցաւ: Փրաւ էր թէ դրամ հաւարուած է Մատուռի մը շինութեան համար բայց մինչև հիմա հաղիւ քանի մը հազար ֆրանք հաւաքուել է:

Արդ երկու շարժիներէ հետէ Հայկ. Մատուռի մը շինութեան ծրագիրը իրականանալու վրայ է: Թիֆլիզցիական յայտենի հարուստ Պրն. Մանթաշեանը մօտ 15 օրերէ ի վեր Բարիզ կը գտնուի. Բարիզի մատուռն Հոգարածութիւնը, և մի քանի ուրիշ անձնաւորութիւններ ներկայանալով յիշեալ Պարոնին խնդրած են որ ինքը ստանձնէ Հայկ. Մատուռի մը շինութեան բոլոր հոգը և ծախսը: Մենք հաստատ ազբուրներէ իմացանք թէ Պրն. Մանթաշեան հաստատական խոստում է ըրեր Բարիզի մէջ Հայ Մատուռ մը շինելու, իր ծախսով:

